ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/34, 02.03.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Էլմիրա Ավագյան Սուրենի» Ա/Ձ

Պատվիրատու՝ «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՁՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Սննդամթերքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել ՀՀ կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՁՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգը չեղարկել և հայտարարել նոր ընթացակարգ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Բողոք բերող՝ ԱՁ Էլմիրա Ավագյան Սուրենի
<<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ
ՀՀ 16063014894000
ՀՎՀՀ 81239262
հասցե՝ Ք. Երևան, Դուրյան թ, 49 շ
mail՝ elmira.avagyan70@mail.ru
Հեռ՝ 099-81-11-37

Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի
<<Ծիծեռնակ>> մանկապարտեզ ՀՈԱԿ -ին
հասցե՝ ք. Չարենցավան, 3-րդ թաղ. 4-րդ փող. Թիվ 16

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ << ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1 >>
ծածկագրով գնանշման հարցում,
սննդամթերքի ձեռքբերում

Բ Ո Ղ Ո Ք

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի <<Ծիծեռնակ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ը /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է << ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1 >> ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/: Հրավերով մատակարարման պայմաններ վերնագրի տակ նշված է , որ մատակարարումները գնորդի պահանջով պետք է իրականացվեն յուրաքանչյուր աշխատանքային օր՝ օրը 2 անգամ, ընդ որում, մատակարարումներն իրականացվում են հետևյալ հաջորդականությամբ՝ մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 9:30 և 13:30: Ընդ որում, պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 1 ժամ առաջ (համապատասխանաբար ժամը 08:30-ին և 12:30-ին):

ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՍԳՀՀ N Ս-8245-20
5 «02» 03 2020

Գտնում եմ, որ մատակարարման սույն պայմանով խախտվել է ՀՀ գնումների մասին օրենքի 3-րդ, 7-րդ և 13-րդ հոդվածները այն իմաստով, որ խտրական վերաբերմունք, ոչ մրցակցային և անհավասար պայմաններ են ստեղծվում ընթացակարգի մասնակիցների համար այն իմաստով, որ մատակարարումից մեկ ժամ առաջ պատվիրատուի կողմից պատվեր ստանալով մասկանիցը ոչ մի կերպ չի հասցնի մատակարարել պատվերը պատշաճ և ժամանակին: Մասնավորապես հաց արտադրող ընկերությունը, եթե հացի պատվերը ստանա մատակարարումից մեկ ժամ առաջ, ապա նա չի կարող արտադրել այդ հացը և ճիշտ ժամանակին հասցնել պատվիրատուին, կամ եթե մատակարարը գտնվում է Արմավիրի կամ Արարատի մազրերում, նա մեկ ժամ առաջ պատվերը ստանալուց հետո չի հասցնի մատակարարել այդ ամենը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ պարտավորեցնել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի <<Ծիծեռնակ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված << ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1 >> ծածկագրով գնման ընթացակարգի պատվիրատուին չեղարկելու նշված վերոգրյալ ընթացակարգը և հայտարարելու նոր ընթացակարգ, որտեղ ապահովված կլինեն հավասար պայմաններ հնարավոր բոլոր մասնակիցների համար:

Կից Ձեզ եմ ներկայացնում բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթուղթը:

Առդիր՝ 1 թերթ:

ԱՁ Էլմիրա Ավագյան Սուրենի

02.03.2020թ.